№ 28 Փետրվարի 22 (Մարտի 5) 1880 Փետրվարի 22 (Մարտի 5) № 28

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Ռացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր խօսքերը իրագործվում են։—Ներքին տեսութիւն։ Նամակ Մեծ-Ղարաբլիսայից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Մի նոր ընկերութիւն։ «Temps» լրագրի թղթակցութիւնը հայերի մասին։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՄԵՐ ԽՕՍՔԵՐԸ ԻՐԱԳՈՐԾՎՈՒՄ ԵՆ

Լրը որ մենք ասում էինք որ Կ. Պոլսի հայերին յատուկ է կապիկութիւնը, մեզ չէին հաւատում, մի քանիսներ և նրանց թւում և մեր մի քանի լրագիրները մեզ դէմ յարձակվում էին։

Բայց ահա, այս օրերս, բաց անելով «Մասիս» լրագիրը, մենք գտանք նրա էջերի մէջ «Հայրենիք» լրագրից արտատպված մի յօդուած, որ մեզ տեղեկացնում էր թէ Կ. Պոլսի մէջ դարձեալ հիմնվեցաւ մի նոր ազգային ընկերութիւն «Հայոց միաբանութիւն» անունով։

Ուրեմն հազիւ միացան «Մշակ», «Արարատեան», «Դպրոցասիրաց» և «Կիլիկեան» ընկերութիւնները և դեռ ևս իրանց համար նոր անուն չը որոշեցին, արդէն հիմնվում է մի նոր ընկերութիւն և իր անունը դնում է «Հայոց միաբանութիւն»։

Ընցեալ տարվայ «Մշակի» համարներում մենք մանրամասնաբար բացատրած էինք այդ տեսակ բազմաթիւ և մի և նոյն նպատակին ձգտող, մի և նոյն պրոգրամ ունեցող ընկերութիւնների փասը, յորդորելով եղածները միանալ մի ընդհանուր ընկերութեան մէջ։ Մենք աւելորդ ենք համարում կրկնել այժմ մեր ասածները։

Միայն այսքան կասենք, որ եթէ Կ. Պոլսի հայերը կը զբաղվեն միայն նոր նոր ընկերութիւններ հիմնելով, առանց աշխատելու հիները զարգացնելու և նրանց գոյութիւնը հաստատ հիմքերի վրա կանգնեցնելու, կաշխատեն միմեանց մէջ մրցելու, փոխանակ ընդհանուր ոյժերով գործելու,—երբէք ոչինչ օգուտ չեն բերի այն երկրին, Հայաստանին, որ իրանց հոգացողութեան առարկայ են դարձրել։

Վերջացնում ենք մեր խօսքը խնդրելով մեր ռուսաստանցի հայերին չը յափշտակվել մեծ մեծ խոստումներով և գեղեցիկ ֆրազներով, չը յափշտակվել նոր անուններով ու տիտղոսներով, այլ հրաւիրում ենք նրանց շարունակել համակրել և օգնել արդէն եղած «Արարատեան» ընկերութեանը, որի գործունէութիւնը և ազգին մատուցած ծառայութիւնները արդէն յայտնի են և որ այժմ միացել է երկու միւս նոյնքան յայտնի և յարգելի ընկերութիւնների հետ, կազմելով մի նոր, ընդարձակ, կենտրոնական, միացած ընկերութիւն։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍԻՑ

—

Փետրվարի 12

Կարդալով «Մեղուի» 9-որդ համարում Ղարաբլիսի անտառապետի գործի մասին մի հնարովի լուր, մենք ևս չատ զարմացանք թէ պ. լրատուն ինչպէս է յանդգնել այդպիսի մի պօշաւոր սուտ ստեղծել, իբր թէ երբ «Մշակի» յօդուածները կարդացվեցան մեր առաջ, մենք բոլորովին հրաժարված ենք, թէ այդ մեր գրածը չէր, և այլն և այլն։ Ինչպէս երևում է պ. լրատուն կամ պ. անտառապետի կոյր գործիքներից մինն է (որպէս թէ չենք ճանաչում պ. լրատուն թէ ով է, ինչ ծառի պտուղ է), կամ նրա թէյից երբեմն երբեմն խպշտել է. եթէ ոչ անկարելի էր զրիչ վեր առնել և այդպիսի յայտնի չոզոքորթութիւն անել։

Մենք թէ թղթակիցներս և թէ մեզ հետ գործող անդամները ինչ որ ասել ենք «Մշակի» անցեալ համարներում յիշեալ գործի մասին, նոյնը կրկնում ենք և այժմ և կրկնելու ենք ամեն տեղ։ Մենք մեր սկսած գործը հազար անգամ չափել և ձևել ենք և այնպէս ենք սկսել և ոչ թէ պ. լրատուի նման կոյրզկուրայն։ Վերջապէս մենք մեր սկսած գործից ոչ հրաժարվել ենք և ոչ հրաժարվելու ենք։ Ուրեմն պ. լրատուն լաւ կանի որ աւելորդ ցնդաբանութիւններով չը պարապի և հանգիստ նստի Քարվանսարայ գիւղում։ Մենք եթէ ուզենայինք կարող էինք մերկացնել պ. լրատուի ով լինելը, նկարագրել նրա բոլոր գեղեցիկ յատկութիւնները, որոնցով չատերին զզուացրել է։

Չը մոռանանք ասել, որ մենք մեր գրած ամեն մի պունկտին առանձին գրաւոր փաստեր ներկայացրինք պ. քննիչին և մեծայոյս ենք որ արդար դատաստանը մօտիկ ապագայում երևան կը հանէ մեղաւորին։—Վերջացնելով նամակը, խնդրում ենք և «Обзоръ» լրագրին, իր նախկին սիրալը ուղղելու համար, անպատճառ արտատպել այս մեր ասածը ռուս ընթերցողներին միամտացնելու համար։

Ստորագրեցին՝ Աստուր Շարբաթեան և Փաշայ Հայրապետեանց։

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս 17 փետրվ.

Ձեր պատուական լրագրի 19-որդ համարում տպած էր մի սրտաչարժ նամակ Թիւրքիայից, որը հաղորդում էր մեզ Վանի սովատանջների դրութիւնը։ Այս նամակը բարձր ձայնով կարդացի ընկերներիս մօտ.—Նամակի հէնց առաջին տողերը մի տխուր տպաւորութիւն արին նրանց սրտերի վրա և երբ լսեցին «հաց, հայրիկ, հաց...» բառերը՝ գլխները բարձրացրին և մի այնպիսի աննկարագրելի հայացքով նայեցին իրար երեսի, որ կարծես թէ, այն րոպէին ուզեցին իրանց եղած չեղածը զոհել նրանց համար մի կտոր հաց ճարելու... Բայց աւաղ—այս մարդասէր պատանիները բացի 5 հոգի թիֆլիսցիներից՝ էին օտարերկրացի աղքատ աշակերտներ կլասիկական Գիմնազիօնի, որ ոչ եղած ունէին, ոչ էլ չեղած, բացի իրանց դասագրքերից և մի քանի մանէթից, որոնց առաջինները հէնց իրանց էին անհրաժեշտ, իսկ երկրորդից իւրաքանչիւրը խոստացաւ իր կարաց չափ մի մասը հանելով ընծայել Վանի սովատանջների օգտին։ Վերջապէս այսօր ժողովեցաւ նրանց խոստացած ռուբլիքը և կոպէկները (ընդամենը 27 մեթ. 10 կ.), յանձնելով ձեր խմբագրատանը, խնդրեմ հասցնելու սովատանջների օգնողներին։ Ահա նուիրալ տուների անունները։

Մ. Կոլմանեան 5 ռուբլ, Ա. Պոպովեան 3 ռ., Ս. Տէր Գրիգորեանց 1 ռ., Կ. Շահնազարեանց 1 ռ., Ա. Սարգսեանց 1 ռ., Ն. Տէր Գէորգեանց 1 ռ., Գ. Թադէոսեանց 1 ռ., Մ. Մարգարեանց 1 ռ., Աւետիսեանց 1 ռ., Ց. Մելիքեանց 1 ռ., Մ. Յարութիւնեանց 1 ռ., Ս. Միսիթարեանց 1 ռ., Ա. Քալանթարեանց 1 ռ., Տ. Շահնազարեանց 1 ռ., Ա. Խանդամիրեանց 1 ռ., Ա. Դանիէլ-Բէկեանց 60 կ., Ա. Յովհաննէսեանց 50 կ., Տ. Գիւզալեանց 50 կ., Ս. Տէրտէրեանց 50 կ., Մ. Ախիջանեանց 50 կ., Ց. Լազարեանց 50 կ., Գ. Ենգիբարեանց 50 կ., Ս. Սարգսեանց 50 կ., Հայումն 50 կ., Բ. Միքելեանց 25 կ., Ե. Սմբատեանց 25 կ., և Խոջայէվթեանց Յովհաննէս 1 ռ., ընդամենն 27 ռուբլ և 10 կոպէկ։

Ս. Տէր-Գրիգորեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են որ վաճառական Տէր-Նիկողոսով, որ խանութ ունէր Դվորցովի փողոցի վրա գտնվող, նորերումս այրված Սարաջևի տան մէջ, արդէն կալանաւորված է դատաստանական քննիչի առաջարկութեամբ, որովհետև նրա վրա կասկած ընկաւ թէ նա դիտմամբ կրակ է տուել իր խանութին։

—

«Кавказъ» լրագրի մէջ տպված էր նորերումս կովկասեան ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուի շրջաբերականը դէպի ժողովրդական ուսումնարանների դիրեկտորները, որի մէջ պ. Եանովսկին խօսելով արուեստագործական դպրոցների մասին, հրաւիրում է բոլոր դիրեկտորներին ուսումնասիրել մեր երկրի քաղաքները ու գիւղերը, հետազօտել ազգաբնակութեան հակումները, նրա պարապմունքները, նրա մէջ ծաղկած արուեստները, քննութեան տակ դնել այլ և այլ քաղաքների և գիւղերի տեղագրական դիրքը, որպէս զի հնարաւոր լինէր այս կամ այն տեղ, նրա արդիւնագործական պահանջման համեմատ, հիմնել այս կամ այն արուեստագործական դպրոց։

—

ՇՈՒՇՈՒՅՑ մեզ գրում են։ «Նահանգապետ Զավչավաձէի հեռանալուց յետոյ Շուշու մէջ կրկին սկսել են յայտնվել գողութիւններ։ Այս միջոցներումս վեց հայի տան մէջ պատահել են գողութիւններ և մի քանի տեղերից բաւական ապրանք են տարել։ Ոստիկանութիւնը չատ է աշխատում այդ գողութիւններին առաջն առնելու։»

—

Մի քանի թիւրքիացի հայ արուեստաւորներ, որոնք ԹԻՖԼԻՍՈՒՄ են բնակվում, հաւաքել են իրանց մէջ և իրանց ծանօթներից 37 ռուբլ 50 կոպ., յօգուտ Վանի սովատանջների և ներկայացրել են այդ գումարը «Մշակի» խմբագրութեանը։ Ահա նուիրատու անձանց ազգանունները. Պետրոս Պալախեան 1 ռ., Ղուկաս Զուլարեան 1 ռ., Սիմէօն Խաչատուրով 50 կ., Պօղոս մանդեսի Գալուստեան 2 ռ., Յովակիմ Տէր-Յովհաննէսով 1 ռ., Յովհաննէս Յեցեան 1 ռ., Պետրոս Տօնապետեանց 1 ռ., Մ. Կարապետ Յովհաննէսեան 50 կ., եղբարք Աբրահամ և Կարապետ Ղազանճեան 3 ռ., Վանանդ 3 ռ., Գրիգոր Գալուստով 1 ռ., Աւետիս Փաչալեան 3 ռ., Մկրտիչ Փաչալեան 1 ռ., Կարապետ Ագրիպպաս 2 ռ., Մկրտիչ Ադամեան 3 ռ., եղբարք Երեմեանց 3 ռ., Առաքել 3 ռ., Մարտիրոս Արզումանեան 2 ռ., բարեսիրաց յոյն 2 ռ., Թովմաս Խուրտեան 50 կ., Գէորգ Յովհաննէսեան 3 ռ., Ընդամենը 37 ռ. 50 կ.։

—

ԼԵՆՔՈՐԱՆԻՑ պ. Նիկողայոս Նազարբէգեան ուղարկում է մեզ 10 ռուբլ և գրում է մեզ. «Անցեալ տարվանից խոստացած եմ ամեն տարի վճարել «Արարատեան» ընկերութեանը 10 ռուբլ։ Ուստի և այս տարի ուղարկելով ձեզ այդ գումարը, խնդրեմ հասցնէք իր տեղը։»

—

Ստացանք Թիֆլիսաբնակ պ. Աւետիս Վարդապետեանից 10 ռուբլ յօգուտ Վանի սովատանջների։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

—

Հինգշաբթի օր Ղալաթիոյ ազգ. մատենադարանին մէջ ուր հաւաքել էին 40-ի չափ պատուաւոր ազգայինք ընդ նախագահութեամբ ս. պատրիարք հօր «Միաբանութիւն Հայոց» անուն ընկերութիւն մը հաստատվեցաւ, որոյ նպատակն է հայ ժողովրդեան կենցաղը դիւրել նիւթական և մտաւորական միջոցներու զարգացմամբ։ Այս ընկերութեան պիտի անդամակցին ամեն ազգայինք, որք տարին 20 ղրուշ կուզեն վճարել թէ Ցամկաստանի, թէ Ռուսաստանի և թէ Պարսկաստանի մէջ։ Այդ տեսակ ընկերութեան մը պէտքը թէև մեկ ու կէս տարի առաջ զգացուած, սակայն ինչ ինչ պատճառներով մինչև ցարդ գործադրված չէր։

Ուրախ ենք որ ս. պատրիարք հօր ազգասիրական ջանից շնորհիւ այսպիսի պատուաւոր ընկերութիւն մը հաստատվեցաւ, որոյ կարևորութիւնը առաւել քան զամենայն վերջին ժամանակներս զգալի եղած էր, զի Ռուսաստանի և Ցամկաստանի մեծահարուստ ազգայինք որք կուզեն ազգին մեծ մեծ գումարներ նուիրել կամ կտակել, կարող չէին իրենց բաղձանքը պակել բովանդակ ազգին անեղծ վստահութեան արժանի և երևելիներէ կազմեալ ընկերութիւն մը կամ մարմին մը չը գտնելով ազգին մէջ։

Ըստ ինքս օրինակ կրնայ ըլլալ Տփխիսեցի ազգասէր Հայու մը նամակը, զոր առ ս. պատրիարք Հայրն ուղղած է և որուն մէջ ազգին 8000 ոսկի նուիրելու բաղձանքն ու պիտա-